Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր

մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

- անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

- ինքնակենսագրություն (Ձեւ 5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ -ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 31-ից մինչև փետրվարի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,
բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա փետրվարի 15-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ ք. համար 4 հիմնական դպրոց ՊՈԱԿ - ում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ Մարքսի 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0235) 2-57-08 կամ (093) 74-00-39 հեռախոսահամարով: